

տակ՝ կը վախճանի Երուսաղէմ 1910 Դեկտ. 11ին: Առաջնորդ Շիշմանեան, Կիւրինի դպրոցներու զարգացման մեծապէս սատարած է, կազմակերպելով լրջօրէն նաեւ Քաղաքական եւ Ուսումնական Ժողովները: Կիւրինի ազգային պատմութեան մէջ, կը մնայ գործօն դէմքերէն մէկը: Ունեցած է նաեւ լուրջ հակառակորդներ, նաեւ վէճեր, որոնց արձագանգը հասած է մինչեւ Պոլսոյ Պատրիարքարան:

Առաջնորդական տեղապահ եղած է Տէր Գասպար Ք. Զատիկեան, Զախձոր Թաղէն: Տէր Գասպար իր կտրիճութեամբ եւ համարձակութեամբ զգալի ազդեցութիւն ձգած է կառավարական շրջանակներու մօտ, ինչպէս նաեւ պէյերու եւ դիւզապետներու վրայ, (Թուրք, ավչար, չերքէզ): Կըսեն թէ Արրահամ Եպս. Մամիկոնեան անուն առաջնորդ մը եւս ունեցած ենք Տէր Գասպարէն յետոյ: Մամիկոնեան Եպս. յազթանդամ, գեղեցկադէմ եկեղեցական մը եղած է, կարող քարոզիչ մը նոյն ատեն: Ան նշանաւոր դարձած է իր Ժողովրդական առակներու գործածութեամբ: Երկու անգամ Կիւրին եկած է: Վերջին գարուն կը վախճանի եւ կը Թաղուի Կիւրնոյ մէջ:

Առաջնորդական տեղապահ եղած է Տէր Մեսրոպ Ք. Աֆարեան: Ատանայի կոտորածին, երբ Կիւրին եւս պիտի ենթարկուէր նոյն ջարդին, Տէր Մեսրոպ մեծ դեր կատարած է հայ Ժողովուրդի կամքն ու դիմադրական ուժը պարտադրելով կառավարութեան մեծամեծներուն, կանխելով աղէտը: Կիւրինոյ կաթողիկոս Սահակ Խապայեանի Կիւրին այցը եւս, այս շրջանին, իր որոշ ազդեցութիւնը գործած է իշխանութեանց վրայ:

Առաջնորդարանի տեղապահ եղած է նաեւ Յեսու Ք. Վարդապետեան: Մեր ունեցած քահանաներէն ամենէն ուսեալը եւ կարող քահանան եղած է Տէր Յեսու, որուն պաշտօնավարութեան շրջանին քաղաքականապէս անգործ ըլլալով, ազգային, կրթական եւ տնտեսական մարդերուն մէջ ունեցած ենք աճուածի եւ զարգացումի բեղուն շրջան մը:

1913ին Կիւրին եկաւ, իբրեւ առաջնորդ, Խորէն Եպս. Դիմաքսեան (Կիւրինցի), ուսեալ, կարող, հեղաբարոյ բնավորութեամբ եկեղեցական մըն էր: Դիմաքսեան սրբազան, երկար ատեն Թափուր մնացած Կիւրինի աթոռին պարտականութիւնները ստանձնելով, անմիջապէս ձեռնարկեց ազգային եւ կրթական ընդհանուր գործերու բարեկարգումին: Լծուեցաւ կազմակերպչական լուրջ աշխատանքներու նաեւ: Զեռնագրեց քանի մը քահանաներ, եկեղեցիներ դարձնելով մշակութային օճախ մը բոլորին համար: Անգամ զինուորապետութեան շրջանին, 1914, Կիւրինի շորս եկեղեցիներուն համար սարկաւազ եւ դպիրներ պատրաստեց, եղած պակասները լրացնելու համար:

Կը յիշեմ այդ օրերը: Իմ դպրոցական ընկերներէս մէկ քանին եւս դպիր օժուած էին: Ոգեւորութիւնը մեծ էր... մէկ օրէն միւսը մեծ յառաջդիմութիւններ կ'ըլլային թէ՛ եկեղեցական եւ թէ՛ կրթական, ազգային մարզերէն ներս: Խորէն Եպս. վերադարձումի մը առաքեալն է:

1915ը արիւնի եւ կողոպուտի մէջ Թաղեց ամէն ծրագիր, մարդկային ստեղծագործական ամէն թռիչք(1):

Գ. ԿԻՒՐԻՆԻ ՎԱՆՔԵՐԸ

1. ՄՐՔ. ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ. — Պաշտան կը գրէ. «Կիւրինի Մանճըլըդ տունն դիւզի մօտերը, բարձրաւանդակի վրայ շինուած է Սուրբ Թորոս վան-

(1) Խորէն Եպս. Դիմաքսեանի մատիմ տեսնել մեր Գ. մատիմ մէջ:

քը, որ շատ հին վանքերէն մին է եւ ժամանակակից՝ Սերաստիոյ եւ Թոխատի Ս. Նշան վանքերուն» սակայն Պալեան չի պատճառաբաներ կամ ապացոյց չի տար իր ըսածներուն: Հաւանօրէն աւանդութեան վրայ հիմնուած է: Վանքին շրջապատին երկու արտաքին մեծ դռներէն մին, որ դէպի հիւսիս կը նայի, այժմ հիւծուած է: Ներքին վիճակը դրժեթէ աննախանձելի, բայց անցեալ 1900 թուականին որբանոցով մը օժտուած էր, Ազգային Պատրիարքարանի տնօրէնութեամբ եւ Մոսկուայի որբայինամներու ծախքով: Վանքը ունի 20 կոորի չափ սեփական հողեր, երկու սրբատեղ, մէկ շաղաք եւ 20 արտավարի չափ ալ մարգագետին:

2. ՍՐԲ. ՅԱՅՈՒԹԻ ՎԱՆՔ. - Կիւրինի Տարենտէ դիւղաքաղաքէն մէկուկէս ժամ հեռու Աշոտի հայաբնակ գիւղին մերձ հին վանք մըն է Սուրբ Յակոբի նուիրուած վանքը, որ շատոնց շարաքայտ մենաստաններու շարքին մէջ մտած է, բայց իրբեւ ուխտատեղի դեռ երկար ատեն այցելուած է եւ սիրուած: Հաւանօրէն ասոր հետ շփոթուած ըլլայ համանուն ուրիշ վանք մը, որ իրբեւ թէ Մանճըլըզ դիւղի մօտերը ըլլայ, եթէ Սուրբ Թորոսի հետ նոյնը ըլլայ՝ Սուրբ Յակոբ ըլլալով անոր մատուռներէն կամ խորաններէն մէկուն անունը:

Յաւալի է՝ Սերաստիոյ կուսակալութեան Կիւրին դաւառակի վանքերու մասին անդրադոյն տեղեկութիւններ կը պակասին: Որքան կ'երեւայ՝ չեն ունեցած ձգիչ որեւէ բան եւ իրենց վրայ խօսիլ տուող միաբաններ:

Հ. ՀԱՄԱԶԱՍՊ ՈՍԿԵԱՆ

«Սերաստիայի, Խարբրդի, Տիարգէֆրի եւ Տրապիզոնի Լաւանգներու վաճկերը», էջ 34-36, Վիեննա, 1962

Դ. ԿՐՕՆԱԿԱՆ ԱՂԱՆԻ ՄԸ ԿԻՒՐԻՆԻ ՄԷՁ
«ԴԷՊԻ ԵՐԿԻՆՔ»

Պոլսեցի Յակոբ եղբայր, - այսպէս կը կոչէին զինքը, - արհեստով կօշկակար էր եւ կը մնար Սերաստիա: Կրթուած եւ Սուրբ Գիրքի հմուտ մարդ էր: Ձէր ամուսնացած: Կրօնի եւ աստուածաբանութեան շուրջ իր ուսումնասիրութիւնները այն աստիճանին զինքը մզած էին նուիրումի մը, որ օր մը անմիջապէս կը քաշուի գործէն ու աշխարհային կեանքէն, իր ունեցած ունեցածը ծախելով, աւետարանը կ'առնէ ու կը սկսի քաղաքէ քաղաք Սրբ. Գիրք քարոզել իրեն բնաբան ունենալով «կեանքն ու ինչքը սչինչ կ'արժեն, պէտք է նուիրուիմք երկինքին»:

Այսպէս, Թոխատ, Ձիլէ, Ամասիա, Մարդուան, Սերաստիա եւ ուրիշ շատ մը քաղաքներու մէջ «դէպի երկինք» քարոզչութեամբ, ունեցեր է շատ մը հետևորդներ եւ ուրեմն կազմեր՝ «Դէպի Երկինք Եղբայրութիւն» անուն հոսանքը:

Կիւրինն ալ անմասն չմնաց այդ «եղբայրութենէն»: Յակոբ «եղբոր» քարոզներն ու աղօթքի ժողովները ապարդիւն չմնացին: Հոս եւս ունեցաւ այդ վերացական դաղափարներով տարուած իր շատ մը հետևորդները: Այս եղբայրութիւնը կարճ ժամանակի ընթացքին, Կիւրինի գրեթէ ամէն թաղամասերու մէջ իր ժողովատեղիները ունեցաւ, այսպէս Խասաղաղ թաղը՝ Սերաստացի Ղազանճի Կարոյին տունը, Ղարատէփէն՝ Խոցենց Համբարին

տունը, Եաշտէփէն՝ Պէրպէր Մուղպուլին, Էօրէնը՝ Ղասպենց, եւ Շուշուլի երկու թաղը՝ Թոփալենց տունն էին Երկար ատեն, ուր ամէն Կիրակի մէկ թաղի ժողովատեղին հաւաքուելով կ'երգէին ու կ'աղօթէին:

«Եղբայրութեան» մասնակցեցան տարեց մարդերէ դատ, երիտասարդ ամուրի տղաքներ ու աղջիկներ: Յակոբ եղբայրը Կիւրինի մօտիկ Տարենտէն եւ Աշոտի գիւղերու մէջ ալ կ'աղմած էր այս «Իէպի Երկինք Եղբայրութիւն»ը, որուն թուրքերը կ'անուանէին Հիլալի Միլլէթի: Չարմանալի էր, որ կառավարութիւնը կ'անտեսէր ասոնց ազատ հաւաքոյթներն ու ժողովները:

Կարճ ժամանակի մէջ այս երկնային «Եղբայրութեան» բարիքները հետզհետէ սկսան երեւան դալ: Իր անդամներէն շատեր սկսան իրենց գործերէն քաշուիլ, ոմանք իրենց նշանածներէն ետ եղան, եւ քանիներ իրենց ընտանիքը լքեցին: «այս սուտ աշխարհին մէջ ի՞նչ կայ, բոլորը ոչնչութիւն, հապա ուրեմն նուիրուինք հողիով ու մարմնով երկնքին» ըսելով:

Այդ թուականներուն Կիւրինի Առաջնորդը Ղեռնդ Եպսկ. Շիշմանեանն էր: Վաղինակ անունով վարդապետ մըն ալ կար, որ նոր ձեռնադրուած էր եւ Շուշուլի եկեղեցիին քարոզիչ էր: Վաղինակ վարդապետ քանիցս տեսակցութիւն ունենալով Յակոբ եղբոր հետ, թելադրեց այս եղբայրութեան առաքեալին, որ ծայրահեղութեան չհասած, դադրի իր «վարդապետութեան» քարոզներէն, յիշեցնելով իրեն, որ շատ մը ընտանիքներ դիմած են արդէն Առաջնորդարան եւ բողոքած՝ այդ հոսանքին դէմ, բացատրելով իրենց դժբախտութեան պատճառները:

Սակայն «եղբայրութիւնը» շարունակեց իր ժողովները:

Այս անգամ Առաջնորդ Սրբազանը իր պատարագի քարոզին մէջ խիստ կերպով քննադատեց այդ եղբայրութեան գաղափարը, շեշտելով թէ՛ աղօթքի հետ պէտք չէ մտնալ նաեւ գործնական կեանքը: Խստիւ արգիլեց այդպիսի հաւաքոյթները եւ հրամայեց վերջ տալ այդ հոսանքին:

«Եղբայրութիւն»ը այս արգելքը վերցնելու համար հարիւրէ աւելի ստորադրութեամբ խնդրագիր մը պատրաստելով, Ղազանճի Կարոյի, Չոքկարեան Գարրիէլ աղայի, Սահակ Վարդապետի եւ Վարդօ Ինճէեանի միջոցաւ ներկայացուց Առաջնորդին: Սրբազանը գրութիւնը կարդալէ յետոյ, բացատրեց եւ ըսաւ թէ, «ձեր այս ժողովները օգուտէ աւելի վնաս ունին մեր ժողովուրդին, կառավարութիւնը քաղաքական հանգամանք պիտի տայ անոր, յետոյ շատերուն գործին, նիւթական թէ բարոյական կորուստին պատճառ պիտի ըլլայ, հետեւաբար իբր հոգեւոր հովիւը այս քաղաքին, խստիւ կ'արգիլեմ ձեր այս գործունէութիւնը»:

Այս խիստ ազդարարութենէն ետք, «եղբայրութիւն»ը քանի մը անգամ դադտնի ժողովներ ունեցաւ, սակայն հետզհետէ անդամներու թիւը պակսեցաւ եւ վերջապէս լուծուեցաւ կառավարութեան հետապնդումին տեղի չտալու համար:

«Իէպի Երկինք Եղբայրութիւն»ը վերջ դտաւ իր ետին թողնելով երկու արարուածքով ողբերգութիւն մը՝ մին միւսէն տարբեր պատկերներով: Առաջինը՝ երբ Թեմը... աղային քրոջը տունը «եղբայրութեան» ժողով կ'ըլլար, Զ...եան Սեն անոր աղջկան սիրահարուած է եղեր եւ ամուսնացաւ, մինչդեռ Սեն ամենքէն աւելի սուրբ եւ «աշխարհային կեանքը ոչնչութիւն է» ըսողներէն էր: Երկրորդ՝ «եղբայրութեան» մէկ անթերի հաւատացեալը Ղազանճի Կարոն, որոշեր է տասնեւհինգ օր ծոմ պահել: Ինքը արդէն նիհարակազմ

25-30 տարեկան երիտասարդ մ'էր, 8-10 օր վերջ հիւանդացու: Ամէն թեւադրութիւն անօգուտ եղաւ, բան չկերաւ, տասնեւհինգ օր ծով սպանեց, սահայն խեղճ տղան անկողնին մէջ մեռաւ: Առաջնորդ Սրբազան Հօր հրամանով Մայր Եկեղեցիին խորանին ետեւի պարսէզը թաղուեցաւ:

Ե.— ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻԻ ԶԱՆԳԱԿԻՆ ՇԻՆՈՒԹԻԻՆԸ

Կիւրիին չորս եկեղեցիներն ալ հին ժամանակ մէկ մէկ փայտէ, յետոյ երկաթէ կոշնակ ունէին: Մայր եկեղեցիինը ամենալաւն էր: Փորձած էին կանոնաւոր խոշոր զանգակ մ'ունենալ, բայց թուրք կառավարութիւնը արգիլած էր: Նոյնպէս արգիլուած էր կարպետով կամ դորգով եկեղեցին զարդարել:

Պէզաղ Յարութիւն Ամիրայի միջոցաւ իրաւունք ստացուած էր թէ զանգակ եւ թէ քիլիմ (կարպետ) ունենալ եկեղեցիին համար: Կարպետ գործածելը ամէն տեղ ազատ էր, իսկ զանգակը դեռ քաղաքներու թուրք մեծերուն հաւանութենէն կախում ունէր:

Վերջապէս Սերաստիոյ մայր եկեղեցիին զանգակ մը շինել տալու համար էրզրումցի ձուլարար մը բերել տուին տեղւոյն Առաջնորդարանին կողմէ: Այդ զանգակագործը հրաւիրուեցաւ նաեւ Կիւրիին: Մայր եկեղեցիին զանգակ մը շինելու համար: Թուրքերը բաւական խոչընդոտ հանեցին առարկելով թէ «եկեղեցին մեր թուրք թաղերուն մօտ է եւ մեղի կը ձանձրացնէ», բայց ի զուր եղաւ անոնց բողոքը, որովհետեւ մեր անվախ ու ամէն դժուարութիւններուն դիմացող Առաջնորդը՝ Առնոյ Եպս. Շիւմանեան, կարեւորութիւն չտուաւ թուրքերուն:

Երբ ձուլարարը Կիւրիին հասաւ, ամբողջ մատաղը եւ ծախքը եկեղեցիին կողմէ, իսկ իր աշխատավարձը, տասը ոսկի վճարումով գործի սկսաւ: Կիւրիին բոլոր թաղերու հայերը զանգակի շինութեան համար նուիրեցին, արոյր, պղինձ, արծաթ ու ոսկեխառն մետաղներ:

Զանգակին կաղապարը պատրաստուեցաւ եկեղեցիին բակը: Հայ երկաթագործներ իրենց փքոցները տրամադրեցին փչեցին, հալեցին ու վերջապէս զանգակը թափեցին: Շինեցին կախելիք տեղը: Խուռն բազմութեան մը ներկայութեան զանգակը կախեցին զանգակատան նմանող փայտէ շինուած կամբջակէ մը: Առաջնորդ Սրբազանը օրհնեց եւ սկսաւ հնչեցնել ուժգին: Ժողովուրդը խանդավառուած էր ու ուրախ, լսելով զանգակի աղու ու խորհրդաւոր հնչիւնը:

Մէկ երկու շաբաթ վերջ զանգակի ձայնը տկար կը հնչէր, ըսին թէ ուժեղ մարդ մը պէտք է չուանը քաշելու եւ զայն հնչեցնելու համար: Այդ ժամանակ Ղարատէիք թաղէն Սոցենք տղայ մ'ունէին Ղաղար անունով 25-28 տարեկան քաջաւորը կազմով երիտասարդ մ'էր, իր արտակարգ աշխուժութեան համար, Սոցենք խենթ Ղաղարը կ'անուանէին զինքը: Կանչեցին այս երիտասարդը զանգակահարութեան համար: Ղաղար իր բոլոր ուժով հնչեցուց զանգակը, բայց հապի 5-10 վայրկեան տեւեց, զանգակը ճաթեցաւ: Մեղք... պէտք էր նորը շինել: Վար առին կտորած զանգակը:

Էրզրումցի զանգակագործը դեռ Կիւրիին էր: Պէտէտէնին մէջ սենեակ մ'ունէր ու կը բնակէր հին այդ ժամանակ Պէտէտէնը Թաքել աղայենց կը պատկանէր, այդ տեղ էր նաեւ Սերաստացի (կոյր) Նշանը որ զինեպան էր:

Ձուլարարը շատ խմող էր և Կ'օգտուէր Կոյր Նշանի գինեպանութենէն: Այն-
չափ շատ կը խմէր որ երեկոյեան հագել անկողին կ'երթար, իսկ առտու դըժ-
ուարութեամբ դործի կը բերէին նորէն սկսած զանգակի շինութիւնը լրացնե-
լու համար:

Առտու մը երբ սենեկապետը Կարայենց Սէքիօ էմմին կ'երթայ Կրգ-
րումցին կանչելու, զուռը դոց կը դանէ, կը կասկածի և լուր կու տայ կառա-
վարութեան: Կու դայ Իսմայիլ չափուշը իր հետ ոստիկանով: Գուռը բանա-
լով կը տեսնեն որ ձուլարարը մեռած է ստամոքսը սլայթած վիճակի մը
մէջ: Լուր կու տան Տոքթ. Ապտալեանին: Մինչ բժիշկին հասնելը Պէտէստէ-
նը հայ և թուրք բազմութիւնով կը լեցուի: Բժիշկ Ապտալեան և Պրն. Գրի-
գոր քննելով կը վաւերացնեն թէ չափազանց խմելէն եղած է:

Էրզրումցի զանգակադործը թաղեցին եկեղեցիին կողմէ: Զանգակը
մնաց կիսատ: Պէտք էր լրացնել: Բարեբախտաբար հայ Կիւրիներն ունէր իր
հարադատ, ճարտար արհեստաւոր զաւակները:

Համբար Մակարեանը կար որ նշանաւոր զինագործ և մեքենագէտ,
վարպետ, վարժ ու ընդունակ արհեստաւոր մ'էր: Նա իր ձեռքով եկեղեցիին
զանգակը լրացնելու դործին ձեռնարկեց: Կաղապարը լրացուց, կանչեց եր-
կաթադործները, որոնք բերին իրենց փքոցները, փչեցին ու հալեցին կոտ-
րած զանգակը, աւելի մետաղ խառնեցին ու շինեցին նոր զանգակը աւելի
հաստատուն և աւելի ուժեղ հնչունով:

Այսպէս Կիւրիների եկեղեցիին զանգակը շինեց, ինքը՝ Կիւրիներն:

Զ. — ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Կիւրիներն ունէր մահմեդական և քրիստոնեայ բնակչութիւն մը: Մահ-
մեդականները քիչ թիւ մը կը կողմէին: Քրիստոնեաները ունէին երկք յա-
րանուանութիւններ, լուսաւորչական, հայ հռովմէական և բողոքական:

Հասարակ անհասանելի կողմէ առօրեայ կեանքի մէջ կրօնքի վերաբեր-
եալ վիճարանութիւններ միշտ կ'ըլլային իրարու միջեւ և վերջ կը դանչէին
անշուշտ, երբեմն ալ անախորժ միջադէպերով:

Օր մը սակայն, թուականէս մօտաւորապէս 70—75 տարի առաջ, կրօնի
ու եկեղեցիի կարող ներկայացուցիչներու միջեւ կրօնական վիճարանութիւն
մը տեղի ունեցաւ, որը խիստ կարեւոր և պաշտօնական հանդամանք ստա-
նալով, հրապարակային դատաստանի ենթարկուեցաւ թուրք կառավարական
և կրօնական պաշտօնեաներու, ինչպէս նաև հայ յարանուանութեանց ներ-
կայացուցիչներու, սուսուցիչներու և հասարակութեանց ներկայութեան:

Ժողովատեղին էր Թէրճանեան Յովսէփ աղային պարտէզը, (Թաքե-
լենց փողոցը) Օգոստոս ամսու տաք օր մը: Ժողովին նախագահեց իսլամ
կրօնապետը (միւլֆիին): Պաշտօնապէս ներկայ էին դատաւորը և քանի մը
հօճաներ, լուսաւորչականներու կողմէ՝ Առաջնորդին տեղապահը, քահանա-
ներ, դասատուներ ի մէջ այլաց զիշերօթիկ դպրոցի վարժապետ՝ Աւետիս
Պրթիկեանը: Հայ հռովմէական եկեղեցիին կողմէ վարդապետ մը և ուրիշ-
ներ: Բողոքականներէն երկու պատուելի և Տիվրիկցի Պր. Գրիգոր Խանդա-
մուրեանը, որ թէ՛ պատուելի էր և թէ՛ բժիշկ:

Վիճարանութիւնը շատ կարգապահութեամբ սկսաւ և տեւեց չորսէն-
հինգ ժամ: Երկու կողմէն ալ քրիստոնէական գիտելիքներու շուրջ տրուած

բացատրութիւնները, որոնք տանկերէնի կը թարգմանուէին, խիստ դժ թողուցին ներկաները, մանաւանդ խլամ կրօնապետը՝ որ իր ուրախութիւնը յայտնեց ժողովին, այդ առիթով քրիստոնէութեան շուրջ իր ստացած ծանօթութեան համար:

Թէ վիճաբանութիւններու ո՞ր կողմը տարաւ յաղթանակը եւ թէ ի՞նչ հիմանց վրայ, այդ մասը դանց կ'ընեմ, քանի որ յիշատակագրութեանս նըպատակը պարզ դէպքը ներկայացնել է, ոչ թէ վերլուծումով դբադիլ. սակայն սա որոշ եզրակացութիւնը եւ բարոյականը կրնանք հանել, որ այդ պատմական դէպքը, վիճաբանական ժողով մը ըլլալէ աւելի, մեր մահմետական դրացիներուն ուղղուած քրիստոնէական դասաւանդութիւն մ'եղաւ եւ անկասկած թողուց իր որոշ ազդեցութիւնը ընկերային ըմբռնումներու մարդին մէջ:

Է.- ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՂԲԻՒՐԸ

Ժամանակին Կիւրինի Մայր եկեղեցիին ի նպաստ իբր արդիւնարեական միջոց եկեղեցիին մօտ 8-10 տէղկէհով թիրէ (մանուսա) գործելու գործարան մը շինեցին: Մասնաւոր վարպետի մը հոգածութեան տակ գործը առաջ կ'երթար: Գաջաբուսերով այս ձեռնարկէն, հողաբարձութիւնը որոշ ծրագիրներ պատրաստեց եկեղեցոյ կալուածները եւ եկամուտը շատցնելու համար. սակայն սոյն ծրագիրները իրականացնելու համար դրամ պէտք էր: Եկեղեցին աղքատ էր այդ շրջաններուն:

Առաջնորդ Սրբազան Հօր խորհրդով որոշուեցաւ որ եկեղեցիին ունեցած անդործածելի եւ աւելորդ արծաթեղէն, ոսկեղէն անօթներ, խաչեր, կանթեղներ, գաւազաններ եւ այլն, եթէ չեմ սխալի մօտաւորապէս 36 օխտ ծանրութեամբ իրեղէններ ծախուի: Այս գործին կազարագրութիւնը յանձնուեցաւ այդ շրջանի հողաբարձութեան դանձապահ իջաչեր աղա Ազարիահանի: Յիշալը անձնական գործով արդէն տարին մէկ անգամ Հալէպ կ'երթար կու գար, այդ արծաթեղէնները հետը տանելով ծախեց: Գոյացած դրամով հողաբարձութիւնը եկեղեցիին շուրջ գտնուող փլատակ տուններն ու խանութները գնեց եւ այդպիսով եկեղեցիին շրջանակը աւելի ընդարձակեց: (Այս այն տեղերն է որ ի վերջոյ 1912-1913 շինուեր է Առաջնորդարանի եւ գլորոցի նոր շէնքերը):

Շէնքերու նորոգութեան եւ թիրէի արտադրութեան գործերը արադ թափով առաջ կը տարուէին: Թէ գործարանին եւ թէ հասարակաց գործածութեան համար ջուրի աղբիւր մը ունենալ կարեւոր էր:

Սաղ թաղի կաթուղի եկեղեցիին ուղղութեամբ վերը, ջուրի սկ մը գտան, այդ ջուրը մայր եկեղեցիին բերելու համար հարկ էր ջրուղի բանալ: Այս ծրագրուած աշխատանքը եռանդով առաջ կը տարուէր, սակայն բազխեցաւ դժուարութեան մը, այն է թէ, - ջրուղին պէտք էր կաթուղիներու եկեղեցիին մօտիկէն ընթանար: - Այս խնդիրը կառավարութեան քննութեան ու դատի ենթարկուելով որոշուեցաւ խնդրոյ առարկայ եղող շէնքին պատէն 12 ոտք հեռուէն բացուի ջրուղին: Մայր եկեղեցիին ի նպաստ որոշում տրուելուն օժանդակեց նաեւ Ուլու ճամիին քով գտնուող Թէքթէին շէնքը: Թէքթէն ալ ջուր լունէր եւ ի հարկէ շէնքը կ'ուզէր օգտուիլ այս պատեհութենէն, նախօրօք հողաբարձութեան հետ կայացուցած համաձայնութեամբ մը:

Այսպէս թէ այնպէս, կառավարութեան կողմէ վաւերացուած փաստաթղթերով ու հրամանագրով ջուրը բերելու աշխատանքը առաջ տարուեցաւ եւ Մայր եկեղեցին ունեցաւ իր անուշ ու պաղ ջուրի մշտահոս աղբիւրը, բաց՝ բոլոր յոգնած ու ծարաւի անցորդներու համար:

Խ. Ն. ՄԱԿԱՐԵԱՆ

Ը.- ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԻՃԱԿԸ

Կիւրիինի հայերը այլ եւ այլ կողմերէն եկած են եւ զանազան ժամանակներու ընթացքին: Տեղւոյն այժմու ժողովուրդէն մաս մը եկած է, հին Դերջան դաւառէն, եւ կը կոչուի՝ Դերջենցիք կամ Թերճենցիք, ոմանք՝ Երասխաձորի Պայրում Չայ ծործորէն, եւ կը կոչուին Պայրմչացի կամ ըստ տեղական արտասանութեան Պայամչացի, ոմանք՝ հին Կարկառ ամրոցէն, եւ իրենց նախնի բնակութեան այժմու հնչման համեմատ կը կոչուին Կերկերենք: Չեմ երկրայիւր, որ Քոջուենք են Քաջուենք, որ կ'երկի Քաջրերունիքէն եկած են, եւ Մարանենք՝ Մարանդունիէն, Դահմազենք՝ հին Պարսից հրախի գաւառներէն, Նահապետենք եւ այլք:

Կիւրիին բնաւ քահանայ կամ վարդապետ մը չէ եկած կաթողիկէութիւն քարոզելու. բայց կային անոնցմէ. եւ բնական հետեւութիւնն է՝ որ իրենք հնուց ի վեր կաթողիկէ էին: Այս կը հաւաստէ նաեւ այնու որ Թերճենցիք շատոնց նոյն դաւանութեան մէջ կը գտնուէին: Արրահամ կաթողիկոս իր տոմարին մէջ կը յիշէ 1741ին Աբարկոս (Արրա Մարկոս) Թէրճէնեան՝ եւ իր հայրն, եւ մեծ հօրը (սրապուն) Մ. Յարութիւնի հոգւոյն պատարազ կը մատուցանէր. նոյնպէս կը յիշէ Մ. Մանուկ Տէվէճեան, եւ ասոնց կաթողիկէ ըլլալուն թուական մը չէ նշանակուած: Նոյնպէս Նահապետենք (Կարատելենք), Մարաֆենք, Սիմաունենք հին ընտանիք են. կան նաեւ Հէքիմենք որ շատ հին ցեղ մ'է որոնցմէ ոմանք Հալէպ դաղթեր են, եւ անկից մաս մը Լիբանան եկեր բազմացեր են, ոմանք պահեր են իրենց մականունը Բժշկեան, արաբերէնի թարգմանելով, որ է Պէյթ-Թապիպ, եւ ուրիշներ առաջին անգամ Լիբանան եկողին անունով կը կոչուին Պէյթ Մուրատ: Ընդունած են Մարոնի ծէսն եւ կը յիշեն իրենց հայ ծաղումն: Վերը յիշուած Նահապետեան գերդաստանին պետն Յովսէփ Կիւրիւնցի որ կը յիշուի Չմմառ յանքին մշտնջենաւոր պատարազաց պլուխն (իբր 1760). ինքը վաճառակա-նութեամբ Բերիա կ'երթար եւ կը դառնար: Ասոնք ամէնը յայտնի կը ցուցնեն որ նոր սկսուած կաթողիկէութեան վրայ դաղափար մը չկայ:

Միայն Պայրամ-Չայցի տոհմին մէկ մասին մէջ կայ աւանդութիւն մ'առանձնական հետեւեալ կերպով: Թէ նոյն տոհմէն (որ այժմ 300 տունէն աւելի են) Յարութիւնի որդին Եղիազար, որ կը յորջորջուի եղեր Կոճիկ Աղլըզար, եւ վաճառակաճութեամբ կը սարապի եղեր, Տրապիզոն կ'երթար կու դար: Ժամանակն անձանօթ է, Բրդնիկայ պատմութիւնը՝ ընդունած բերանացի տեղեկութեանց համեմատ, յարմարցուցեր է այն ժամանակին, յորում Արրահամ վարդապետ Արծիւեան՝ արքեպիսկոպոս Հալէպի՝ կը վարէր Տրապիզոնի առաջնորդութիւնը 1714-1717 տարիներու միջոցին: Եղիազար անոր քարոզները լսելով եւ լուսաւորուելով, եկեր նաեւ իր եղբայրները համոզեր է, որոնք էին Մ. Աւետիք Պայամչա, Ալեքսանդրոս եւ Տիշտիշ, որոնց-